Ա. ՏԱՐԻ   ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 11 ԱՐԱՑ 4383 — Հ. Տ 18 ՅՈՒՆՈՒԱՐ 1892   ԹԻՒ 5

ԴԱՆՈՒԲ

LE DANUBE

ՀԱՆԴԷՍ ԵՌԱԹԵՐԹ ՕՐԵՆԱՑ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան բաժանորդագինն է 8 ֆր. եւ կամ 3 ռուբլի թղթադրամ. կանխիկ վճարելի։

Ուրիշ ամէն տեղի համար տարեկան բաժանորդագինն է 12 ֆր. եւ կամ 5 ռուբլի թղթադրամ, կանխիկ վճարելի։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

—

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարե-րէն եւ Ֆռանսերէն լեզուով։

Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով։

M .S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal "TANOUP"
(BULGARIE)   ROUSTCHOUK

ԶԵԿՈՒՑՈՒՄ

—::—

Ինչպէս որ մեր 2րդ թուով յայտարարած էինք մեր թերթը չպարբերական ըլլալուն, անկանոնի մեր նախկին թուոյն ընթացքը մեր խոստումը կը կատարենք, թէպէտ այն անհնարութիւններն որ մեր ունեցած էինք, առանց ձեռք բերելու այժմէն այս բաշխումները կ'ունենանք, սա համոզմամբ թէ, ինչ որ խոստանալով կը յուսայինք ստանալ արդիւնք ցոյց տալով ջանանք ձեռք բերել:

Եթէ երբեմն մեր գծած ծրագրին շեղելով կը պարտաւորինք՝ հրատարակելով այնպիսի նիւթեր որք չէ թէ միայն կը շօշափեն Պուլկարիոյ եւ Ռումանիոյ Հայութեան պէտքերն, այլ կ'ընդգրկեն ամբողջ Հայութեան պահանջող հարցերուն, այս կէտը խնդրենք չը նկատուի մի անհաւատարմութիւն մեր նպատակի դէմ, այլ հարկ է գիտնալ թէ, մեր սիրտը ամբողջ Հայութեան համար վառ զգացումներ կը պահէ իւր մէջ, մենք այս անուղղութիւնը հոս չ'պիտի պարտաւորուէինք պարզել. եթէ մեր Պուլկարիոյ եղբայրներէն մի քանին այս դիտողութիւնը բերանացի մեզ չ'ուղղէին. բայց մենք միանգամ ընդ միշտ կ'ըսենք թէ, ամէն Հայ ինչ շրջանակի մէջ ալ որ ըլլայ պարտաւոր է սա ամբողջ Հայութեան ունենալ այն զգացումը, ինչոր իւր շրջանակին համար կը զգայ:

Դարձեալ մեր նպատակին հաւատարմաբար ծառայելու համար ամէն զոհողութիւն յանձն առնելով առանց բաժանորդաց վրայ ծանրանալու, պահելով ընդ միշտ անփոփոխ 12 ֆրանք տարեկան բաժնեգին:

Մ. Թ.

ՏԵՂԱԿԱՆ

—

Տեղւոյս թաղական խորհուրդը իր Դեկտ. 17 թուակիր պաշտօնագրով հրաւիրած էր 30 հոգիէ բաղկացեալ մի յանձնաժողով՝ քաղքիս վարժարանին տարեկան պիւտճէն պատրաստելով և զայն բարեկարգելու համար։ Միայն 22 ոլջամիսներն փութացած էին անձամբ պատասխանել իրենց եղած նուիրական հրաւէրին. անցեալ դեկտ. ամսոյ 25ին ժողով ունեցան անհատական գպրոցական տուրքերն աւելցուցին ինքնին գովելի օրինակներ հանդիսանալով, այլ ցաւալի է տեսնել որ ինչպէս շատ տեղեր նոյնպէս քաղքիս մեջ նաւեկը գտնուին այնքան խաւարամիտ և յետադիմական գլուխներ որք յառաջդիմական ազգասիրաց այս ջանքերն 'ի դերև հանելու փորձեր կ'ընեն. Նոր սահմանուած տուրքերու գումարն 5100 ֆրանքի մօտ է. թաղ. խորհուրդն ալ պիտի տայ 1000 ֆրանքի մօտ. ինչպէս նաև ամենահաւանական է որ եթէ կազմուի նաև մի լուրջ հոգաբարձութիւն 1000 ֆրանք ևս բացուիկ մի հասոյթ կրնայ գոյացուիլ. որով 7100 ֆրանք հաստատ մի եկամուտ ապահովեալ կը համարուի. յանձնաժողովը 3 օր անընդհատ աշխատելով սոյն պէտքերն պատրաստելէ յետոյ հետևեալ խնդիրներն ևս որոշել է։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Ա. Մասնագէտ մանկավարժի մը հետ բանակցիլ Հ. Ա.(*) 'ի մասին դասատուութեան։

Բ. Սիլիսորէի դպրոցին ուսեալ և զարգացեալ դասատուն Պ. Գր. Սիմոնեանցի հետ բանակցիլ վարժարանիս տեսչական պաշտօնի համար (խիստ լաւ մի ընտրութիւն որոյ մասին սրտանց յաջողութիւն կը մաղթեմք)։

Գ. Պուլկար լեզուոյ դասատուի փոփոխումն դրպրոցական տարեգլխոյն։

Դ. Հոգաբարձուայ թուոյն յաւելումն առ նուազն 3 անդամով։

Ե. Դպրոցին ներքին և արտաքին բարեկարգութեան համար հոգաբարձութեան և թաղ. խորհրդոյ որոշումներն մի տեղեկագրով ընդհ. ժողովոյ հաղորդել առ նուազն մի ամիս յետոյ։

Վերոյիշեալ պիտաճէն սահմանելէ և 5 խնդիրներն վճռուելէ 'ի զատ հոգաբարձութեան կողմանէ յանձնաժողովոյ ներկայացեր է նաև մի խնդիր որ մեզի իրաւունք կուտայ թէ զարմանալու և թէ ցաւ յայտնելու. քաղքիս 3 վարժապետաց խնդիրը (**) որն որ երկար վիճաբանութեանց նիւթ եղեր է հետևեալ բանաձևի տակ. կամ ճամբայ տալ 3ին մէկէն և կամ ուղղութեան համար վերջին մի ազդարարագիր տալ իրենց. 15 հոգի քուէ կուտան ազդարարագրի և 7 հոգի քուէ կուտան ճամբելու։

Շուարած ենք թէ խնդրոյն որ կողմէն քննել սկսինք և թերութիւնը որու վրայ ծանրացնեմք, հոգաբարձուաց թէ դասատուաց, եթէ դասատուաց վերայ ծանրացնեմք դա մեր խղճմտանքի գործը գործը չէ, դասատու մը որ երկար ատենէ 'ի վեր կը պահուի մանաւանդ մին որ 25 տարիէ 'ի վեր կը պահուի ու կը պաշտօնավարէ Պուլկարիոյ Հայ վարժարանաց մէջ, տարակոյս չի վերցներ որ օր ըստ օրէ նոր փորձառութիւններ ստանալու առաւելութիւնն ալ կ'ունենայ, և այսօր պէտքը զգայուի զայն ճամբելու, աս ինչ տեսակ հանելուկ է, եթէ ագէտ ու ապիկար մի անձ է ինչո՞ւ 25 տարիէ 'ի վեր ազգային վարժարանաց մէջ գործածուէր է և այդ քառորդ դարու սերունդք, գլխաւորապէս այս քաղքին, ինչո՞ւ խամրուեր են այդ ձեռքի տակ և ո՞վ կրնայ հաւատալ որ այսպէս լինի, այդ գանգատ ընողներն չի խորհեցան որ այդ վարժապետէն ուսում առած աշակերտներ կան քաղքիս մէջ. կամ թէ աւելի շիտակը խօսելով իրենք այն ատիճան զարգացեա՞լ էին որ մինչև ցարդ պաշտօնավարող հոգաբարձութիւններէ չի տեսնուած թերութիւններ իրենք տեսան եթէ այդպէս է, ինչ՞ վարչական ապիկարութիւն էր որ մէկ վճռով չի հրաժարեցուցին զայնս և դիմեցին տեսակ տեսակ ժողովներու յանձնաժողովներու. իրենց պաշտօնի իրաւասութիւնը, չե՞ն ըմբռնած արդեօք հոգաբարձու ըլլալը ինչ՞ կարծեցին. «ես հոգաբարձու եմ» ըսելով, գաւազանը ձեռքը առնել ու անոր ասոր հետ իրեն անծանօթ եղած դաստիարակութեան խնդրոյն վրայ վիճելով, նախապէս դասատուաց թերութիւններու աչք գոցելէ յետոյ ուրիշներու դրդմամբ թելադրուիլ ու 'ի վերջոյ խնդիրը այս ատիճանի հասցնելով հոգաբարձու՞թիւն ըրած կ'ըլլայ մարդ թէ ազգին մի գէշութիւն հասուցած կ'ըլլայ. հարցնեմք անգամ մը թէ դպրոցը ինչ՞ ծրագրի վրայ կ'ընթանայ, ինչ՞ ուղղութիւն ինչ՞ դրութիւն ունի, Գերմանակա՞ն, թէ Ֆրանսական. խա՞ռն, կամ թէ երկրին հանգամանաց յարմարցուած մի որոշ ծրագրով, մենք այս հարցումներըն շատ անգամ ըրած եմք այլ մեզի տրուած պատ 'ի պատ պատասխաններէն սա համոզումը ունեցած եմք որ մեր հոգաբարձուներն պէտք ունին այս տեսակ ծրագիրներն ուրիշ տեղէ բերել տալու. . . . . : Այն ատեն ալ պիտի խորհինք թէ ո՞վ պիտի հսկէ այդ ծրագրոյ գործադրութեան։ Մենք տեսանք նորոդ կազմուած հոգաբարձութեան ցանկը հաւատացինք որ ամենքն ալ նոր հագուստ ունին. ամբողջութիւնը կարելի է հաւաքաբար մի նպաստաւոր արդիւնք արտադրեայլ այժմէն վատ մի կանխազգացումն ունիմք որ նորէն այդ 6 թիւը 2ի կամ առ առաւելն 3ի պիտի իջնէ ու 7100 ֆրանք կլորիկ գումարը պարապ տեղը պիտի վատնուի. ուստի խորհուրդ կուտամք մեր

(*) Այս անձը ներկայացուած է յանձնաժողովոյ մի անդամէ աւելի միակողմանի հաշուով քանթէ 'ի նպաստ դպրոցի. յայտնի ջանք մը կայ Հ. Կ. կողմանէ զայն հոս բերելու։ մենք 'ի մօտոյ ղինքը կը ճանչնամք Իւսկիւտարու Սէլամիէ թաղի Սուրբ Խաչի դպրոցը ծաղկոցի կառավարիչ էր, եթէ հրաշքով մանկավարժի փոխուեցաւ ատոր ըսելիք չ'ունիմք. այլ սա գիտեմք որ Հ.ի օթեակ է. խմբակ է կամ կուսակցութիւն է, մեծ վստահութիւն եւ յոյս ունի նորա գործունէութեան մասին։

(**) Այս երեք դասատուաց մին պ. Գ. Տ. որ ոչ դաստիարակ է եւ ոչ ալ ուսուցիչ, բարոյականութիւն ըսուած բանը եթէ յուսանք նրանից չարաչար կը խաբուինք. դա աւելի յարմարութիւն ունի յիմարանոցի մը մէջ յիմարները կրթելու քանթէ վարժարանի մը մէջ աշակերտները. մենք կը զարմանանք այն անձանց որ զինքը այդ փոփուկ պաշտօնի են կոչած։

սիրելի քաղաքացւոց որ Ց հոգիէ բաղկացեալ մի հոգաբարձութիւն ընտրեն սա տեսակ մի կազմակերպութեամբ (*) «դաստիարակութիւն» բառին իմաստը հասկցող և օգին ըմբռնող մարդ հոգաբարձու ընտրել. խորհիլ, խօսիլ և միանգամայն գործադրել գիտցող մարդոց յանձնել դպրոցը որ սերունդներու նախադուռն է. միթէ անկարելի՞ է Բուսճուքի մէջ սոյն արժանիքներով Ց հոգի գտնել. դա ծիծաղելի հարցում է, հապա ինչ է պատճառը որ հոգաբարձու ընտրած ատենին աչքերնիս կը գոցենք ու առանց խորհելու կուրօրէն կամ՝ «ՌԷ» համար մարդ կ'ընտրենք. եթէ մեր քաղաքացի ազգայինք կը ներէն հետեւեալ անձինքը կը ներկայացնեմք որ առ այժմ մեր յոյսերն կրնան իրականացնել

Պարոնայք

Գասպարեան Ստեփան. Դաւիթեան Մկրտիչ. Հճի. ստեփանեան Միհրան. Սարաֆեան Յովհաննէս. Քիւրտեան Երուանդ։

Մ. Թ.

ԱՅԻ ԻՆՔՆԱԿՈՉ ԴԵԿՏԱՐՈՐՆ Ի ՍՊԱՆԻԱԿԱՆ ԴՊԼԵԿԻՆ

Հ. Հ. Մ.

Եթէ պատասխանենք, փաքրոգի պիտի ըսուինք՝ հասկացող դասակարգի կողմանէ, իսկ եթէ ըռնենք ժողովրդեան կողմանէ մեղաւոր պիտի նըկատուինք։ Ցաւ է ասել, մեր մէջ հասկացողներ շատ քիչեր են. իմաստակներ տխմարներ ահագին լեգէոններ կը կազմեն, գէթ այդ իմաստակներուն և տխմարներուն և անոնց ներկայացուցիչին ըմբերելու համար մի քանի տողով պատասխանելն աւելորդ չենք համարիր. արդ հակառակ մեր սկզբանց և նպատակին պատասխանենք։

Հայ ժողովուրդ, «ԴԱՆՈՒԲ»ի հրատարակութեան սկսանք. ինչ՞ ծրագիր և ինչ՞ նպատակ ընտրէինք մեզ որ «չի դատապարտուէինք». եթէ Ձեզ դովելու յառաջաբանով սկսէինք մի քանիներու նման բաղդախնդիր-խաչագող պիտի համարուէինք. եթէ մեր թերութեանց մասին լռէինք «տխմար» պիտի նկատուէինք, արդ մենք որ ժողովրդեան հարազատ զաւակն լինելու յատկութիւնն ունենալ կը ձգտինք և անոր օգտին համար ծառայել մեր ջանքերն են եղած ինչ՞ միջոց և նպատակ կարող էինք ընտրել քան զայն որ արդէն մեր նախորդ թերթերով պարզած եմք. մեթէ մեր նպատակէն դուրս կարելի՞ է համարել Հայու ամբողջութեան վատ կամ լաւ կողմերու մասին խօսելն և կամ անոր բարեկամի և թշնամւոյ նկատմամբ գրելը և կամ անոր սրբասանց սիրողին և կամ առ երեւոյթ համակրողին վրայ ծանօթութիւն տալը. միթէ ամեն ճշմարիտ Հայու պարտականութիւնն այս չէ՞ և թէ այսպէս չի՞ զգար. կարծեմ ամեն ողջամիտ Հայ մեզի հետ «այո՛» պիտի ըսէ. բայց մեզ փոյթ չէ թէ խաւարամիտ և մի կարդ կեղծ ազգասէրներ ազգասիրութեան կեղծ դիմակի տակ «ոչ» մռնչեն զի մենք գիտենք զայնս ջախջախել և անոնց բերանները չափը տալ։

Մի քանի տարիներ յառաջ Մարսիլիոյ մէջ սկսաւ հրատարակուիլ մի Հայ թերթ «Արմենիա» անուամբ. անշուշտ կը յիշէ ամեն Հայ թէ ինչ՞ էին այդ թերթին նախորդ տարւոյ նիւթերն. և որչա՞փ ախորժանօք կը կարդացուէին ասոնք ամեն Հայու կողմանէ, և ապա ինչ՞ պատահեցաւ որ այդ թերթը 'ի վերջոյ դարձաւ մի ինչ անուանական Հայ թերթ։

Երկար կը լինի մեզ ասոնոր ասոնց վերայ մանրամասնութեանց մտնելն անցողակի իմն պարզենք։

Արմենիա իր առաջին տարիներու մէջ երբ անդրանիկ Հայ թերթն էր Հայու սրտերուն հետ խօսող. ամեն Հայ նուիրական պարտականութիւն կ'զգար զայն կարդալ և նորա օգնել. այդ թերթը Հայու մօտ քիչ թէ շատ ընդունելութիւն գըտաւ և ամեն Հայ սկսաւ համակրանօք վերաբերիլ յիշեալի խմբագրութեան, մինչդեռ խմբագիրն փոխանակ երախտագիտական զգայմամբ ոգորուելու, սկսաւ չարաչար գործածել անմեղ ամբոխի այդ անկեղծ համակրանքներն, այսինքն կուրանալով վատանալ և նուաստանալ։ Անցողակի պատմենք յիշեալի Ռ-ր-Ռ-Ն-Դ-ն ու Լ-գ-ռ-Ռ-Ն-Դ-ն. թէպետ շատ երկար կ'ըլլայ. զի հատորներ կը հարկաւորին. բայց մենք պիտի փութանք յառաջ բերել այն իրական փաստերն որք արդէն ժողովուրդն ինքնին կ'զգայ իրերու բնական հետեւութեամբ։

Սա երբ նկատեց թէ, իր թերթ բաւական համակիրներ ունի և այդ թերթի շնորհիւ բաւական գումարներ կորզելու դիւրութիւն. սկսաւ գործակատարներու միջոցաւ յայտարարել թէ իր

(*) Այս օրերս կը տեղեկանանք որ նորոգ կազմուած հոգաբարձութիւնը իր հրաժարագիրը մատուցած է, թաղական խորհուրդի։

թերթը անգնահատելի է. ամեն հաւատացող թող գնահատէ զայն իր քսակի չափով. որովհետև 300 բաժանորդով չէ կարելի ապրիլ ինչպէս իր թերթովն ալ յայտարարեց. այս խաչագողական վարպետ խաղը տևեց բաւական ժամանակ. այս եղանակէն ալ չի գոհանալով քիչ ատենէն խմբագրեց մի ինչ ընկերութեան ծրագիր մկրտեց զայն Հ. Զ. Մ. անուամբ և այդ ընկերութեան ծրագրի տակ կլորիկ գումարներ հասցնելու միջոցն ուսումնասիրել և Հայու աչքին փոշի փչելու համար «դեղագործներ և բժիշկներ» հայցնել. ա՜ղ մտացս ապշութեան. թերևս ուրիշ իրեն համար փեսայացուներ լինին ադոնք քան Հայութեան համար աշխատողներ, որովհետև այժմ փորձով կը տեսնեմք օրինակներն. ահա՛ մեծանուն ազգասէր աղա Մկրտիչ Սանասարեանի սաներէն մի քանին, երբ իրենց ուսումներն աւարտեցին յԵւրոպա. բարերարին կամայն հետևցին և սկսան ինքնագլուխ գործերով պարապիլ. միթէ՞ նոյն բանն Հ. Զ. Մ. դիտուն պատահելու հաւակնութիւնն ապօրինի և մեղանչակա՞ն է մտածելն։

Երկրորդ՝ երբ յիշեալ պարոնն կը գտնուէր ազատ հողի վրայ պատրաստեց անխոտոտելի մի ընկերութեան (Հ. Հ. Մ.) ծրագիր և հուչակեց ինքզինքը հիմնադիր՝ ատենապետ, դանձապահ, համարակալ, գործադիր ժողով, ընդհանուր ժողով. (բայց իսկապէս միմիայն վարպետորդի հաւաքիչ)։

Միթէ՞ խելանի և լաւագոյն չէր լինէր եթէ մի քանի լուրջ և հասկացող ազգայնոց հետ գործակցութեամբ կատարեր քաղաքագիտական այդ մեծ գործը որք անշուշտ իր ուղղութենէն բորբոքվին տարբեր և օգտակար մի ուղղութիւն ցոյց պիտի տային ազգին։ Միթէ՞ մեզ նման ազգի մը փրկութեան ծրագիր պատրաստելն կամ անոր ճակատագրին հետ խաղալն տղայական մի խաղալիկ կարծեց. և կամ իր ո՞ր մէկ ունեցած դիւանագիտական հմտութեանց ապաւինելով գործի ձեռնարկեց կը հարցնեմք ֆորթոֆալապաշներս. պրն. Փորթուգալեան ինչ ուսում առած և զարգացում ստացած մարդ է, որ կարողանայ այդ տեսակ մի հսկայական գործ կատարել ինքնուրոյն. միթէ Վանայ որբանոցի մէջ խօսած տղայական դասերով ինքզինքը մեծ մարդ լինել կարծեց և այսօր ալ առանց ամաչելու իր ծանծաղամիտ ծրագիրն չի խպնիր իր թերթին ճակատը դնելու. մինչև ցարդ ազգին չի ճանչցուց թէ որոնք են այդ ընկերութիւնը կազմող անհատներն. և այդ կարծեցեալ ընկերութիւնը իր ո՞ր որոշումներովն իրեն օրգան ընտրեց զ«Արմենիա» և դեկտադոր զՓորթուգալեան. եթէ «Արմենիա» այդ ընկերութեան օրգանն էր պէտք չէ՞ր որ ըստ իւր կանոնագրէն քաղուած յայտարարութեան, որ ամեն օր իր թերթի ճակատը կը տեսնուի. մի օր ընկերութեան որ և է գործին մասին տեղեկութիւն տար ազգին գէթ վերի վերոյ. մի օր տեսա՞ք այդ բանը Հայ ժողովուրդ. կը հաւատամ որ ամենքնեդ ալ ո՛չ պիտի ըսէք։

Արդարև այդ ընկերութիւնը հիմնած ժամանակ պահուրտուկ խաղալու նման մի քանի արժանաւորներու անուններ յեղյեղեց թերթին մէջը առերևոյթս. բայց նոքա չափելով 'ի մօտոյ նորա հասկացողութիւնն ու զարգացումն պարտաւորեցան կարևորութիւն չի տալ իր ձայնին ինչ որ ինքը արդէն գիշեր ու ցորեկ կ'երազեր յաջողեցաւ ետանդէ դրդեալ անխորհուրդ գործակատարներու միջոցաւ հանիլ իր նպատակին. ահա այս եղաւ իր վատութեանց մին։

Գանք այժմ խօսել իր մի ուրիշ տխուր պատկերի մասին. այժմ հրապարակաւ յայտարարենք այն բացարձակ և անուրանալի ճշմարտութիւնն որ հաստատուած է դարերէ 'ի վեր տիեզերքիս գիտնոց կողմանէ, այսինքն թէ, աշխային խառնուածքը մարդկային սեռի ամենաստոր կազմուածքն է և աշխային խառնուածքով մարդոց մէջ ոչ մի դար չէ տեսնուած առաքինութիւն, մեծագործութիւն և արիութիւն. ուրեմն տղայական և ծիծաղելի բան չէ սպասել զայնս Փորթուգալեանէ որ աշխային խառնուրդի կատարեալ տիպարն ու ներկայացուցիչն է. ասիկայ գիտական մի փաստ է. մոռնամք զայն և անցնիմք իրականին որ գէթ ամեն մտքեր դիւրամատչելի լինի։

Արմենիաի երրորդ տարեշրջանի ատենները ըսկսան դուրս գալ «Հնչակ» և «Հայաստան» անուն Հայ թերթերը երբ ասոնք ալ սկսան ժողովրդեան դասեր և քարոզներ խօսիլ Հ. Հ. Մ. ինքնակոչ դիկտադորն սկսաւ իր օրգանով անտեղի յարձակումներ և կծու քննադատութիւններ անել «Հնչակ» իր կարգին գիտցաւ ջախջախել իրեն յատուկ ընկերական վսեմ ոճով. բայց պարոն դիկտադորն վրան չ'առաւ։ «Հայաստան» չ'ուզեց ունենալ Անգլիական պաղարիւնութիւնը, սաստիկ յուզուեցաւ. յոյզէն 'ի մեծ ցաւ Հ. Հ. Մ. կազմակերպութեան (անրջային) դիկտադորին օտարազգի դատարաններու առջև դատի հրաւիրել

և պասանձեցնել և 60 ֆրանք ալ տուգանք տալ պարտաւորել զայն և իր ամօթալի պարտաւորթիւնը Հ. Հ. Մ. օրկանին մէջ հրատարակել. այս տխուր անցքերը ամեն Հայու խորհելէ՞ն տար միթէ զգալու որ Հ.Հ.Մ. ժողովը պարտէր իր դատաբեռեալ դեկտադորն և իր օրկանը փոխել և այդ պաշտօնը ուրիշի մը յանձնել. Ալ պէտք է՞ համոզել մի փառատենչ հատատելու համար որ թէ սուտ ու կեղծ է այդ Հ. Հ. Մ։

Արմենիան Ճրդտարեշրջանին Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքէն դուրս եկաւ կարող և հասկացող գրչի տակէ «Հայք» անուն հանդէսն որ պատիւ բերաւ մինչ այժմ բոլոր Եւրոպա և Ասիա հրատարակուող Հայ թերթերուն. այս լաւ հրատարակութիւնն ալ անմարսելի թուեցաւ Հ.Հ.Մ. ժողովին որ իր օրկանով այսպէս յայտարարեց «սա ուսկէ՞ եկած է որմէ՞ հրաման ըստացած լրբութիւն կ'ունենայ Դ-ՐԵՆ ծրագիր հրատարակել և ցրուել Հայ դործոցներու մէջ, քանի որ Հ. Հ. Մ. ծրագիրն ունպատակն արդէն զամբիւղով երկնքէն իջած են և անքննելի կը համարուին. քանի որ նուիրագործեալ է սպանիական դղեակի մէջ. և վաւերացեալ պրն. Փորթուգալեանի կողմանէ»։

Համեստութեան և հասկացողութեան պակը 'ի ճակատ ունեցող այս եղական Հայ հանդէսը կարևորութիւն չի տուաւ, այլ զիջաւ նոյն իսկ իրեն խրատներ կարդալ բայց մեր դեկտադոր պարոնը վրէժ առնելու համար մանաւանդ կոչեց զայն յայտնելով «քանի որ իր թերթն ու ծրագիրն արդէն ազգը փրկելու՞՞՞ հանդիսանալ են ալ ինչ՞ հարկ կայ ուրիշ մի նորը պատրաստել և եղածն քննադատելու սրբապղծութիւնն ունենալ» Հայք դարձեալ կարևորութիւն չի տալով յաղթապանծ ճակատով յառաջ վարեց իր դասը. չի մոռնալով երբեմն իր ճոխ հմտութեամբ և վայելուչ քաղաքավարութեամբ Հ. Հ. Մ. կլորիկ ապտակներով խրատներ խօսել. բայց որո՞ւ կը խօսէր. մեր պարոն ինքնակոչ դեկտադորի ականջներու ծակերն շատ խոշոր էին, ամենէն մեծ վեհ և վսեմ խրատներ դիւրութեամբ աջ ականջէն կը մտնէին ձախէն դուրս կ'ելլային բայց երբեմն իր կաղմուածքին յատկանիշն եղող մերամաղձոտութեան վայրկեաններուն կը զգածուէր կը սկսէր կաաղիլ և կատաղութենէն ալ ինքզինքը խածնել և չէր յագենար։ Այս օրերուն դուրս եկաւ Աթէնքի մէջ հանդուցեալ Ասպարէզը. երբ նկարեց մեր դեկտադորն իր ենթադրական Հ. Հ. Մ. Զուարանին վրայ նստած. գաղան դարձաւ զի չէր ոպաս որ իրեն այդչափ խայտառակէին. բայց 'ի մեծ ցաւ մեր ամենուս «Ասպարէզ»ի յաջորդ թերթը դանուսոր չի ներկայացաւ Հայ հասարակութեան որպէսզի դէթ մեր պրն. դեկտադորի հոգւոյն սրբեղծ գոյներն ալ նկարեր։ Այս օրերէն քիչ վերջ «Դանուբ» սկսաւ հրատարակուիլ առանց յայտնահեակ նպատակ, իրը փորձաքար չիսուիլ ժողովրդեան ամեն խաւին հետ, լաւին լաւ ասել վատին վատ. կարող էր միթէ՞ մեր ինքնակոչ դեկտադորի նման զգայուն և խածան սիրտ մը անտարբեր դանուիլ ու «Դանուբ»ի ալ չի խածնել. «Դանուբ»ին ալ խածաւ իր յատուկ գռեհիկ հոգւովն և հայհոյիչ բերանովն բայց մենք չի ցաւեցանք զի արդէն գիտէինք փորձով թէ երբ մի նոր թերթ դուրս գայ փոյթ չէ թէ ինչ ուղղութիւն որ ունենայ պէտք է Հ. Հ. Մ. հանդերձեալ օրկանէն և կատաղած դեկտադորէն խածնուիլ փոխարէն զայն ողջունելու. այլ 'ի վերջոյ խածնողը պէտք է ապտակը ուտէ և քթին սուկէն մեղմեղթայ ու «Ասպարէզ»ի նկարած Զուարանը նստի։

(Շարունակելի)

Մ. ԹԻԹԻՆՃԻՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

(Շարունակութիւն 4 թիւէն և վերջ)

եւ երկիրներու, այլ միւսնոյն երկիրներու մէջ ապրող ժողովուրդն ունեցաւ իւր առանձին տարեգլուխներն. եւ այս զանազան տարեգլուխներէն մի կարգ խառնակութիւններ եւ չփոթութիւններ ծնեցան. այս չփոթութեանց առաջն առնելու համար 1863ին Ֆրանսայեց Կարլոս Թ. մի հրովարտակով հրամայեց Յունվարի մէկն ճանչնալ իբր տարեգլուխ (թերեւս այդ օրն ալ իրեն համար նշանակութիւն ունեցել է) որ կը շարունակվի մինչեւ այսօր. ո՞ գիտէ դեռ քանի տարիներ ալ պիտի տեւէ։

Այդ թուականներին մեր աշխարհն Կաթոլիկական պարերի ազդեցութենէ զուրկ չէր. այդու մենք եւս ակամայ հետեւողութեամբ ընդունեցինք բայց հասարակ ժողովուրդը դարձեալ չը մոռցաւ իւր Նախնեացմիշտ տարեգլուխն տօնել. եւ պիտի դայ մի օր ալ որ պաշտօնապէս տօնեն 9|21ը իբր տարեգլուխ։

ՅՈՒԼԻԱՆ ՏՕՄԱՐ.— Քրիստոսէ երկու դար յառաջ Հիպպարքոս անուն մի յոյժ աստղագէտ. առաջինն լինելով. արեգական եւ մոլորակներու շարժումներն հաշվեց. նոյնպէս երկրիս արեւի շուրջը կատարած շրջանն ալ 365 օր 6 ժամ։ Քրիստոսէ 100 տարի յառաջ Հիւսպարքոսի այս գիտողութիւնք 'ի նկատի առնուեցան Յուլիոս Կեսարի ժամանակ. եւ սկսան տարին 365 օր հաշվել.

եւ մի քանի ժամու տարբերութեան համար ալ 4 տարին մի անգամ փետրվարի ամիսն մի օր աւելի հաշվել. եւ այդ չորրորդ տարին կոչել նահանջ տարի այս որոշման ըսուեցաւ Ցուլեան տօմար որ մինչ ցարդ գործածելի է Արեւելեան մի քանի ազգայ համար այլ ոչ Արեւելեան ազգերի։

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՕՄԱՐ.— Ցամին 1582ին Գրիգորիոս. պապի ժամանակ 'ի նկատի ունեցան Ցուլեան տօմարի դրութիւնը. նկատեցին որ այդ դրութիւնը սխալ է. զի երկիրս արեւի շուրջը կը դառնայ 365 օր 5 ժ. 48 ր. 51 մանրեկրորդն. այսինքն մօտ 6 ժամն որ 60 տարուայ ընթացքի մէջ իրը 10 օր տարբերութիւն ունի. այս սխալն ուղղելու համար 1582 տարուայ հոկտեմբերի 5ին վրայ 10 աւելացուցին յաջորդ օրուայ փոխանակ 6 ըսելու 15 ըսին. բայց այս հաշիւն ալ ճիշդ չէր. զի այս հաշուով տարին եղաւ 365 օր... 6ժ. 11 ր. եւ 18 մանրերկ. աւելի։ այս սխալանայ առաջն առնելու համար որոշեցին տարբերութիւնը նուազել. փոխանակ դարամուտ չեղող տարիներէն ամեն չորս տարին մի անգամ նահանջ հաշուելու, նահանջ համարել միայն այն տարիներն որք միշտ 400ով բաժանելի են ինչպէս 2000ը. իսկ 400ով ճիշդ չը բաժանուող դարամուտ տարիներն ինչպէս 1500, 1700, 1800, 1900 չը համարել նահանջ։ Այսպէս զեղջելով այն դարամուտների նահանջը որ 400ի բազմապատիկը չեն, 1257 տարվան մէջ քան 10 օր չատ քիչ պակաս կը զեղջուի, այնպէս որ 3000 տարին մէկ օր տարբերութիւն պիտի անէ. այս կարգադրութեան կոչեցին Գրիգորեան թուական կամ Նոր ոճ (N. S.) եւ Ցուլեան տօմարին ալ հին ոճ (V. S.) եւ այն օրից մինչեւ մեր օրերու տարբերութեան համար էլ երկու օր աւելցուցին այն ժամանակի 10 օրուայ տարբերութեան վրայ, որով այժմ Ցուլեան տօմարի հետեւող Արեւելեան ազգերի քաղաքային տարին 12 օր ետ կը մնայ քան զբուն գիշերահաւասարի տարին. եւ մի քանի տարիներ վերջ այդ 12 օրուայ տարբերութիւնն 13-14, կամ 15 պիտի լինի. եւ այն ատեն ալ պիտի գրեն չատեր այսպէս 12/25 փետրվարի կամ 48/28 մարտի եւն''եւն''։

Ցուլեան դրութիւնը թէ բնական եւ թէ քաղաքական դրութեամբ բոլորովին սխալ է։ Գրիգորեան դրութիւնն էլ մասամբ զերծ չէ այդ պիսալից. զի ինչ հարկ կայ բնութեան մեռած ժամանակն՝ ձմեռ եղանակում քաղաքական տարվայ սկիզբն դնել եւ նոր տարի ծնել, այս էլ բոլորովին անպատշաճ եւ միանգամայն չփոթ առիթ է աստղաբաշխական տարվայ հետ, որովհետեւ եթէ Ցունվարը, իրը ամսագլուխ ընդունենք կը սխալվենք, զի արեւն արդէն իւր մի աստեղատան մէջ մտնելու առաջին օրն է (տարին 12 աստեղատուն ունի)։ Ըստ Լատինաց 20 օր կայ որ մտել է եւ ըստ Ցունաց 8 օր այս երկու դրութեամբ խախտված նկատվում են բոլոր քաղաքական ամսագլուխներն իրենց աստեղատանց մէջ մտնելու օրերին հետ. այս չփոթութիւնք մեզ պարտավորցնում են առել թէ, Ցունվարն ամսագլուխ կամ տարեմուտ նկատելն բոլորովին սխալ եւ ծաղրելի մի դրութիւն է։ Մանավանդ թէ մեզ Հայոց համար էլ ոչ՝ մի նշանավոր անցքի կամ յիշատակի սկիզբն կամ տարեդարձն է. ուրեմն մեզ ինչ հարկ այս ծիծաղելի եւ չփոթալից դրութեանց միոյն հետեվելով Ցունվար 1/13 տարեգլուխ նկատել. թո՛ղ Ցուլեան կամ Գրիգորեան տօմարի հեղինակներն ու ազգերն գործածեն այդ տօմարներ. մենք ունինք մեր Հայկեան Լ Ցայտ տօրց տօմարական դրութիւններն որոնցմէ մին կարելի է բուն բնական տարվայ հետ գործածելի անել։ Մեր մէջ առաջին անգամն լինելով, ազգային նախանձախնդրութենէ թելադրեալ ձեռնարկեց այս խնդրոյն հանգուցեալ Տիար բժիշկ Նահապետ Ռուսինեան՝ Տաճկահայոց սահմանադրութեան երեք անդրանիկ հեղինակներից մին. 1854ին եւ 1872ին պատրաստեց երկու անգամ «բնական տարեցոյց» անվամբ օրացոյցներ այդ օրացոյցներով պարզեց Ցուլեան եւ Գրիգորեան տօմարների խոշոր սխալանքներն. եւ ամիսներու Եւրոպական անճոռնի անունների տեղ ընծայեց ազգին գողտր ու քաղցրահնչիւն անուններ. որ մենք այս օր իւր գործերէն արտագրելով կը ներկայենք «Դանուբ»ի արգոյ ընթերցողաց։

Հանգուցեալը իւր երկու ընկերների հետ միացած 1854ից սկսեալ մինչ 1872 մեծամեծ ջանքեր զոհեցին, Հայ լեզվի մշակութեան եւ աշխարհաբարի զարգացման եւ ծավալման համար, բայց նոյն տարիներում ապրող եւ գործի գլուխ անցնող մեր ազգային լիտիրիկներն՝ այս նորոգողութեան ոգին իրը սրբապղծութիւն նկատելով, այսինքն աշխարհաբարի եւ նոր տարեցոյցի գործածութիւնն, սկսան Կ.Հ.Պատրիարքարանից հալածանաց եւ բանադրանաց կոնդակներ հեղանման զուրս թարել եւ արգելուլ. բայց ժամանակը իւր նորոգիչ ոգվոյն հետ հասկացուց այն բացարձակ ճշմարտութիւնը թէ Հայը, պարտավորվ որ իւր աշխարհիկ լեզուն մշակէ ու գործածէ, այսպէս պիտի գայ դարձեալ մի ժամանակ որ մեր այս նոր տարվայ օրն էլ փոխվի, բայց երանի՜ թէ օր առաջ փութան մեր կարող եւ ձեռնահաս անձնավորութիւնք այս մեծ սխալի դարմանը տանել. եւ մենք փոխանակ օտարի փետուրներով զարդարվելու մեր աղվամազերով պարծենամք։

Ահա՛ Տիար բժիշկ Նահապետ Ռուսինեանի չինած ամիսներու անուններն, որք իրենց բառակազմութեամբ խիստ պատշաճաւորէն համապատասխանում են բնական տարվայ 12 ամսոց եւ չորս եղանակաց։

ԳԱՐՈՒՆ
- ԶԱՐԹԻՆ—ՄԱՐՏ-Արիս. պարբերազմի լայսրուածի անունից։
- ԾԱՂԿԻՆ—ԱՊՐԻԼ-Ափրոտիտա. (բռ. Ցնկ.) յիշատակ հեշտուելեան լայսրվածուհուոյ։
- ՄԱՐԳԻՆ—ՄԱՅԻՍ-Մայիա. դիցուհոյն անունից, որ էր Աբրամազդայ հոմանոյշը։

ԱՄԱՌ
- ՀՆՁԱՐ—ՅՈՒՆԻՍ-Հռ.Յունիոս անուն ընդունիչի անունից
- ՏՕԹԱՐ—ՅՈՒԼԻՍ-Հռ.Ցուլիոս Կեսար այս ամսոյ մէջ ծնելոյն համար
- ՄՐԳԱՐ—ՕԳՈՍՏՈՍ-Օգոստոս կայսեր անունից

ԱՇՈՒՆ
- ԿԹՕՆ— ԷՊ.(*)-լատ,Եօթնեղբորդ
- ԹԱՌՄՕՆ—ՀՈԿՏ- » ութնեղբորդ
- ՄԻԳՕՆ—ՆՈՅԵՄ » ինեղբորդ

(*) Նախնիք սկզբանէ անտի մարտ ամսից սկսում էին

ՁՄԵՄ
ՁԻՒՆԵՐ—ԴԵԿՏ լատ. գոնէրդդ.
ՍԱՌՆԵՐ—ՑԱՒՆՎԱՐ-ցաւոս կոռոդաշ ԲՈՒՔՎԸՐԻ ՈՒՆՈՒԷՑ. կը ՆԿԱՏԷՆ ԵՐԷՔԼԻՈՆԷ ԷԲԷ ՄԻ ԵՐԷՈԸ ՍՆՑԷՈԼ ԵՒ ՄԻՈԸ ՆԷՐԿԱՅ ԴԷԿՈՈՄ ԷՆ։
ՄԸՐԿԵՐ—ՓԵՏՐՎԱՐ-փետրուարի (գէնդ) 'Ի ՀՈՎՄ. ԱՅՍ ՈՄՈՈՄ ԷՐԷՆՑ ՄԱՅՐԱՓԱՂԱՓԷ ՀՐՋԿԱՅԱԷԸ ՅՈՅՇԱԽ ԳԷՆԴ ՊՈՊՈՀԷԼԸՆ ՀՈՄԱՐ ԱՅՍ ՈՄՈՎՆ ԷԼ ՏԵՆԴԻ ՈՄՄ ԸՆԻ։

Այդ', Ազնիւ ընթերցողք, այժմ բաղդատեցէք եւ դատեցէք, այս ի՞նչ անճաշակ եւ անբնական անուններ. են որ մենք եւ չատ ազգեր տալիս ենք տարվայ բնական ամիսներուն իբր անուններ. միթէ ազգային նախանձախնդրութեան պատիւ՞ չէ, որ մենք գործածենք մեր սոյն գոյար ու պատշաճ բառերն ու անուններն։

(*) ՕՏԼՈՍ 26 ԴԵԿՏ. 1891 ***

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Կ. ՊՕԼԻՍ

«ԴԱՆՈՒԲ»ի 4րդ թուոյն մէջ կարդացինք մի նամակ Վառնակ գրուած 20 դեկտ. թուականաւ. տեղւոյն ազնիւ երիտասարդութեան կողմանէ իբր հերքմնագիր։

Նկատելով որ չարամիտ ոմանք Հայ գաղթականութեանց մէջ կը ջանան գայթակղութիւն արփուել. տեսակ տեսակ անտեղի տարաձայնութեամբք խօսելով յանուն մեր և 'ի վկայութիւն կոչելով զմեզ։

Նկատելով որ այս թիւր տարաձայնութիւններ ուրեք ուրեք ճշմարտութիւն կ'ըմբռնուին և ժողովուրդը կը բաժնեն ազնուաբեր կուսակցութեանց։

Նկատելով որ Մարսիլիոյ «Արմէնիա» լրագիրն կեդրոն կը դառնայ այս տեսակ ազգավնաս տարաձայնութեանց և մի քանի անհատական կարծիք ընդհանուրին կը վերագրէ։

Պաշտօնապէս կը յայտարարենք՝ «ժողովրդեան մասնաժողով» պր. Թիւթիւնճիէֆի հրատարակած «ԴԱՆՈՒԲ» լրագրոյ դէմ ո՛ և է բողոք չէ բարձած. հաւատալով որ ժամանակիս մի անկեղծ ճշմարտախօս թերթն լինել կը միտի նա։

Մեր այս խօսատվանութենէ գուրս ամեն ինչ կեղծիք է։

«ԴԱՆՈՒԲ» կարդացողներ պիտի տեսնան թէ հոն անձնական շահեր չեն տիրապետեր և ջանքեր չեն լինիր թերթի խմբագրութեան կողմէն ժողովրդի քսակ պարպելու համար միջոցներ վնտռելու։

Եւ նկատողութեան առնելով այս կէտերը համակրելի դարձած է այս թերթ մասնաժողովիս, և նոյնը չենք ուզեր պահանջել նաև Հայ ազգէն 'ի մասնաւորի Հայ գաղթականութիւններէն։ Այսպէս կը յորդորենք մեր Պուլկարարնակ և Ռումանաբնակ ազգայիններն որ քաջալերեն «ԴԱՆՈՒԲ»ը որ յուսատու մի ուղղութեան կը հետևի։

Կ.ՊՕԼԻՍ 6 ՅՈՒՆՎԱՐ 1892 (Սորբաֆրոնիւոտ. Ատենադպիր. Ատենադպիր և 12 անդամոց։)

Կ.ՊՕԼԻՍ 8 ՅՈՒՆՎԱՐ 1892

Տօնական օրերն անցան. ընդհանուր սուգ մի կարծես կը ծանրանայ Պոլսոյ Հայութեան վրայ անարգել. ներկայ ժամանակիս մէջ պօրիս ապրող ամեն անհատ սրգալու դատապարտուած է. մի մեծ սիրութեան մահաբեր ժանտախտի պէս կը կշռէ ամեն ուղղի վրայ. մեր ողբեր կոծեր երբ պիտի դադրին. այս Աստուածային յայտնութիւնն ուտող օրերու մէջ կը տեսնես արցունք կայ ամեն տունի մէջ. Յունայ ծննդեան ասնի առթիւ մի քանի քաղաքական ամբաստանութեամբ դատապարտուած 30 ի չափ բանտարկեալներ արձակուեցան երկար ժամանակէ զրոյց կը շրջի. տեսնենք մենք եւս կը յուսանք որ Հայ բանտարկելոց ալ ներումն չնորհուի. այդ ներում այնքան աւելի ընդունելի է երբ ընդհանուր լինի եւ աքսորելոց ալ արձակուելու պատճառ։

Թէպետ Պոլսոյ լրագիրներ լռութիւն կը պահեն, սակայն հասած մասնաւոր նամակներու նայելով Հայրիկի հիւանդութիւնը կրկին սասկայեր է երուսաղեմի մէջ եւ վերապահութեամբ կը հաղորդեմ ասա գրուած մի զրոյց ըստ Հայոց վանքի բժիշկ կորածէ իւր յոյս վերջնականապէս. Սրբազան Հայրիկէն։

Կարինէ հասած լուրերու նայելով Ղեւոնդ Եպ. Շիշմանեանի հրաժարականէն իվեր բոլորովին անգոհացուցիչ վիճակի մի մատնուած են տեղւոյն ազգային գործերն, քաղաքական, կրօնական ժողովներն ալ վախ կայ որ կազմալուծուին, որովհետեւ նոցա չատ ծանր եկած է Շիշմանեան Եպիսկոպոսի հրաժարումն յԱռաջնորդութենէ. չենք գիտեր թէ Ազգ. Կեդրոնական վարչութիւնն ի՞նչ գարման կը մտածէ անառաջնորդ գաւառներու մասին. անհոգութեան մատնուած դանդաղօրէն կը վարուինք մինչեւ որ ազնուաբեր կուսակցութիւններ յառնէն կամ ազգակործան կրօնափոխութիւններ պատահին եւ յայնժամ եւեթ զգաստանալով կ'ուշաբերինք երբ անցած է ժամանակն կը ցաւինք որ այսպիսի պարզ խնդիրներն սնգամ Սրբազան Աշըքեան Պատրիարքի զգացնելու հարկին մէջ կը գտնուինք։

Պրուսայէ եւս զժգոհութեան դիրեր կը սեղան. նախկին առաջնորդ Բարթողիմէոս Եպիսկոպոս Գուլգունճուքի եկեղեցին կը վարէ իւր քարոզչութեան պաշտօն.— մի քանի օրէ 'Ի վեր կը տառապի ենֆլուենցէ առանց գիտնալու թէ քան զայդ քարոզչութեան պաշտօն կարեւոր, Պրուսայի առաջնորդութեան պաշտօնն ունի. մեր այս դրամատէր Եպիսկոպոս անհոգ կ'անցնէ մի կեանք

տարին, այսինքն գարնան սկզբից եւ ամիսներուն էլ այս օրինակ այլանդակ անուններ չէին տալիս, այլ պարզապէս ասում էին առաջին ամիս, երկրորդ ամիս եւն''եւն. բայց բարբարոս դարերում քմցածին անուններով փոխվեցան ութ ամիսներու անուններն, անշուշտ լուսաւորեալ աշխարհն էլ մի օր ասնք պիտի փոխէ։

(*)Սոյն յօդուածի առաջին մասի մէջ գտնուած «- (վ) տառերու համար յարգոյ յօդուածագիրը մեզ դիտել տուած է որ միշտ վ գործածենք, որք իբր սխալ մեր դրաչարը ուղղել չանացած էր. ինչպէս նաեւ այլ վերջաւորութիւններ. բայց առ այժմ սուղ են լեզուաքննական խնդրով զբաղուելու ուստի մեր պատասխաններն այս նկատմամբ պատեհ առթի կը թողունք։

Ծ . Խ.

նողկալի. իւր գիշերներ կը սահին մեծատանց եւ նշանաւոր էֆէնտիներու տանց մէջ. եւ ապագայ Պատրիարք դառնալու յոյսն ալ իւր ուսոց վրայ բառնալով կ'ապրի երանելի վիճակի մը մէջ։

Շ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Կ.ՊՈԼԻՍ 10 ՅՈՒՆՎԱՐ 1892

Կուսակցութիւնք անխղճօրէն յառաջ կը վարեն իրենց ազգավնաս նպատակները, Բարթողիմէոսեանք սկսած են իրենց բոլոր ճիգը թափել. որպէս զի կարողանան պետերնին Պատրիարքացնել. հետեւաբար սկսած են հանրագրութիւն մը ստորագրել տալ ժողովրդեան. զոր ձեռք ձգելով կը զրկեմ «Դանուբ»ի ընթերցողաց։

«Ամենապատիւ Ս. Հայր,

Ստորագրեալ Հայերս. նկատելով յորմէ յետէ կը նստիք Կ.Պոլսոյ Պատրիարքական աթոռոյ վերայ. չէ կրցած ձեր բարձր Սրբազնութիւնը արժանաւոր միջնորդն լինել Ազգին եւ մեր բարեխնամ կառավարութեան մէջ. ուստի կը խնդրեմք որ հաճիք ի սէր Աստուծոյ հրաժարիլ անդարձ եւ թոյլ տալ որ ձեզ յաջորդ մը գայ եւ մեր հաւատարիմ զգացմանց միջնորդ լինի առ մեր Օգոստափառ Վեհապետին որուն կը մնամք միշտ հաւատարիմ«

Բազմաթիւ ստորագրութիւնք.

ԴԵԿՏ. 26
Կ.ՊՈԼԻՍ.

ՎԱՐԱԶԴԱՏ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ

Ինչպէս պէտք է խնամել թիֆօէ բռնուած հիւանդ մը։ Հիւանդը պէտք է առանձնացնել տանը մէջ, իւր սենեակը պէտք է մտնեն միայն անոնք որ զինքը պիտի խնամեն. իսկ մանուքն տղայոց և երիտասարդաց խառնիլ արգիլեալ պէտք է լինի։

Լաւ է նաև եթէ հիւանդը խնամողները ջրախառն փենիկան թթուով (ասիտ ֆէնիք) լուացուին (մէկ քիլօ ջրոյ 30 կրամ). սենեակին դիրքն այնպէս պէտք է ըլլայ որ օդը դիւրաւ նորոգուի, վարագոյր, գորգ եւայլն չը գտնուելու են։ և անկողինն ըստ կարելւոյն սենեակին մէջտեղը դրուելու է։

Հիւանդին արտաքսածները, սենեակէն դուրս չը հանած, խառնելու է ջրախառն քլօռիւր մը (զէնքի 100 կրամ մէկ քիլօ ջրոյ). նոյն հեղուկով առատապէս լուալու է թափուած տեղը, ամեն անգամ։

Հիւանդին զգեստները, անկողնոյ սաւանները, վերջապէս ինչ որ գործածուած են իրեն համար, սենեակէն դուրս չհանուած ջրախառն փենիկան թթուի մէջ դրուելու է և անմիջապէս լուալ տալու է։

Հիւանդին մեկնելէն կամ բժշկուելէն յետոյ, սենեակին մէջ պէտք է դրուի աւազ. վրան հողէ ամօթի մը մէջ կրակ և մէկ քանի կտոր ծծումբ (քիւքիւրտ) առաւել կամ նուազ սենեակին ընդարձակութեան համեմատ։

Սենեակը 24 ժամ փակեալ մնալէ յետոյ անկողնոյ, զգեստի վերաբերեալ ամեն բան ամենամեծ խնամքով մաքրելու են։ Սենեակը լուալու կամ սրբելու է առատապէս ջրախառն փենիկան թթուով (30 կրամ մէկ քիլօ ջրոյ), և մէկ շաբաթ հովահրելէ յետոյ բնակելի ըլլալու է զայն։

Այս հրահանգը Բարիզի Առողջապահական ժողովը գրած է թիֆօի հիւանդութիւնը համաճարակ եղած առեն։

ՄԱՆՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Առ պ. Վ. Ձեր յօդուած կը հրատարակուի յաջորդ թուով։

Առ պ. Գ. Մ. Ձեր ուզած գրքերի մասին դիմեցէք «Կեդրոնական գրավաճառանոց»'ի Թիֆլիզ։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»ի խմբագրատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՐԱՖՖԻ, ԽԵՆԹԸ (Արկածներ վերջին Ռուս-Թուրքական պատերազմից) եւ **ՋԱԼԱԼԷԴԴԻՆ** (Մի պատկեր նրա արշաւանքից). երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ. Տիպ։ 8 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻ, ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ Անդրկովկասեան պատմական վէպ. 5 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻ, ԿԱՅԼՆԻ ԿՏԱԿԸ 5 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻ, ՄԻՆԸ ԱՅՍՊԷՍ, ՄԻՒՍԸ ԱՅՆՊԷՍ Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից։

ՐԱՖՖԻ, ԿԱՅԾԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻԻ Պատկերը խոշորագիրը. 2 ֆր։

» » աւելի փոքրը. 1 ֆր.

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԵԱՆ

ՌՈՒՍՃՈՒՔ ՏՊԱՐԱՆ Մ.Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԵԱՆԻ

Скоро печатницата на Спиро Гулабчевъ.